



ԵՐԵՎԱՆԻ  
ԶԱՂԱԶԱՊԵՏՏՐԱՆ



# ԷՐԵՎՈՒՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

2017  
ՏԱՐԵՎԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



### Սիրելի համաքաղաքացիներ,

Երևանի քաղաքապետարանն ամփոփում է աշխատանքային տարին արդեն ավանդական դարձած տարեկան հաշվետվությունների թողարկմամբ: Լիափույս եմ, որ դուք կթերթեք հաշվետվության էջերը և կծանոթանաք անցած տարվա ընթացքում Ձեր վարչական շրջանում կատարված աշխատանքներին: Ուրախությամբ

եմ արձանագրում, որ Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում մեծածավալ աշխատանքներ են իրականացվել, և տարեվերջին կարող ենք վստահ ասել, որ ձեռքբերումների շարքը ոգևորիչ է: Պետք է նշեմ, որ այդ գործում իրենց զգալի լուծման հավասարապես ներդրել են ինչպես մեր բնակիչները, այնպես էլ վարչական շրջանների ղեկավարները:

Վստահ եմ, որ առկա որակական փոփոխությունները՝ բարեկարգված բակային տարածքները, կառուցված խաղահրապարակները, ավելացած կանաչապատ տարածքները, բարեկարգ ու լուսավոր մայրերն ու փողոցները իրենց անմիջական ազդեցությունն են ունենալու Երևանի յուրաքանչյուր բնակչի կյանքի որակի և ընդհանուր քաղաքային միջավայրի դրական փոփոխության տեսանկյունից:

Վստահ եմ նաև, որ այն տեսանելի արդյունքը, որ արձանագրել ենք հարմարավետ քաղաքային միջավայր ստանալու գործում, լինելու է յուրաքանչյուրիս հոգատար վերաբերմունքի ու հոգածության առարկան, ինչն էլ թույլ է տալու իրականացնել նոր ծրագրեր՝ մեր մայրաքաղաքի և նրա վարչական շրջանների զարգացումը դեպի երկրաժամկետ հեռանկար ուղղորդելու նպատակով:

**Տարն Մարգարյան**  
**Երևանի քաղաքապետ**



### Հարգելի էրեբունեցիներ,

2017 թվականին մեր վարչական շրջանում բավականին արդյունավետ և հաջող ծրագրեր իրականացվեցին: Ներկայացնելով կատարված աշխատանքների հաշվետվությունը՝ պետք է արձանագրենք կարևոր փաստ՝ անցած տարիներին գրանցված տեմպը շարունակել ենք պահպանել բոլոր ուղղություններով: Կատարված աշխատանքների հաջող ընթացքը մեծ մասամբ պայմանավորված է եղել այն համագործակցային մոտեցմամբ, որ ցուցաբերել էք և շարունակում եք ցուցաբերել դուք, սիրելի էրեբունեցիներ:

Հաջորդ տարի, ինչպես և նախկինում, մեր աշխատանքներն ուղղված են լինելու բոլորիս հիմնական նպատակն իրագործելուն, այն է՝ ավելի շենացնել ու զարգացնել էրեբունի վարչական շրջանը: Վստահ եղեք, որ այսուհետև ևս հաշվի են առնվելու յուրաքանչյուրիդ առաջարկությունները, լուծում են տրվելու ձեզ հուզող հարցերին ու արվելու է հնարավոր ամեն ինչ յուրաքանչյուրիդ համար հարմարավետ ու հաճելի միջավայր ստեղծելու նպատակով:

Էրեբունի վարչական շրջանի ղեկավար  
Դավիթ Գրիգորյան

# ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2017 թվականին էրեբունի վարչական շրջանում կատարվել են ասֆալտապատման, եզրաքարերի վերանորոգման և հենապատերի կառուցման աշխատանքներ:

## Փողոցների, մայթերի, բակերի ասֆալտապատում

- ✓ Իրականացվել է փողոցների և բակային տարածքների ընթացիկ վերանորոգում՝ 70957 քմ ասֆալտապատում:

## Հենապատերի կառուցում, վերանորոգում

- ✓ Գլինկայի փող., Խաղաղ Դոնի փող. հ.1/1 շենք, Նոր Արեշի 41-րդ փող.՝ հենապատերի վերանորոգում:

## Այլ շինարարական աշխատանքներ

- ✓ Սարի թաղի 3-րդ փող. դեպի 10-րդ փող. Նոր աստիճանների կառուցում
- ✓ Արցախի պող. հ. 4 շենքի 10 հենասյունների ամրացում

## Թեքահարթակների կառուցում

- ✓ Կառուցվել է 30 թեքահարթակ



Ասֆալտապատման աշխատանքներ



# ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՒԴԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

2017 թ. զգալի աշխատանք է կատարվել շքամուտքերի, շքապատշգամբների, վերելակների և տանիքների վերանորոգման ուղղությամբ:



- ✓ իրականացվել են վերանորոգման աշխատանքներ 46 շենքերի 126 մուտքերում:
- ✓ 50 բազմաբնակարան շենքերում վերանորոգվել են 7731 քմ մակերեսով հարթ տանիքներ:
- ✓ 63 բազմաբնակարան շենքերում վերանորոգվել են 3061 քմ մակերեսով թեք տանիքներ:
- ✓ 18 պատշգամբների վերանորոգում՝ Արցախի պող. հ. 4 շենք, Տ. Մեծի պող. հ. 48 շենք, Տ. Մեծի պող. հ. 74 շենք:
- ✓ Նկարագարդվել է 27 բակային տարածք:
- ✓ Վերանորոգվել է 9 վերելակ:
- ✓ Համատիրության հետ համագործակցությամբ նորոգվել է 1549 գծմ ջրթափ խողովակ:



# ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

2017 թ. կառուցվել են խաղահրապարակներ, պուրակ, իրականացվել են բակային ենթակառուցվածքների ներկման և վերանորոգման աշխատանքներ:



## Բակային տարածքների հիմնանորոգում, բարեկարգում

- ✓ չիմնանորոգվել է 6 բակ՝ Սարի թաղի 9-րդ շարքի վերջնամաս, Արցախի պող. հ. 1 շ., Արցախի պող. հ. 22, Ազատամարտիկների փող. հ. 78, Մուրացանի փող. հ. 192, Խ. Դոնի փող. հ. 27 հասցեներում:
- ✓ 19 բակերում իրականացվել են գույքի նորոգման և տեղադրման աշխատանքներ:
- ✓ Բակային տարածքներում տեղադրվել են նստարաններ, զրուցարաններ, սպորտային մանկական խաղեր:



# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

2017 թ. սոցիալական ծրագրերը շարունակել են լինել վարչական շրջանի աշխատակազմի ուշադրության կենտրոնում:



- ✓ Կազմակերպվել է 266 ծնողների այցելություն Արցախի Հանրապետությունում և ՀՀ սահմանամերձ գոտիներում ծառայող ժամկետային զինծառայողներին:
- ✓ Գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հետ համատեղ վարչական շրջանում բացվել է «Գթության խոհանոցի» արտագնա սպասարկման կենտրոն՝ 70 շահառուի համար:
- ✓ Վարչական շրջանի տարածքում հայտնաբերված անօթևանները տեղափոխվել են «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի անօթևանների կենտրոն: Սուրբ Զատիկի տոնի առթիվ կենտրոնի շահառուներին տրամադրվել է պարենային աջակցություն:
- ✓ Իրականացվել է սիրիահայերի աջակցության ծրագիր, որի արդյունքում վարչական շրջանում բնակվող 58 սիրիահայ ընտանիքների տրամադրվել է պարենային աջակցություն, հագուստ, սնունդ, դեղորայք, մարզահագուստ, մանկական սնունդ, խնամքի և անկողնային պարագաներ, կենցաղային տեխնիկա:

ՀՀ և ԼՂՀ սահմանամերձ գոտիներում ծառայող զինծառայողներին այցելած ծնողների քանակ





- ✓ Վարչական շրջանի միակողմանի և երկկողմանի ծնողագուրկ, սոցիալապես անապահով և բազմազավակ ընտանիքների 7-13 տարեկան 160 դպրոցական երեխա իրենց ամառային հանգիստն անցկացրել են Կոտայքի մարզի Մարմարիկի «Նեքիաթների կիրճ» մանկական առողջարարական ճամբարում:
- ✓ «Էրեբունի-Երևան 2799» տոնակատարության սոցիալական բաղադրիչի շրջանակում 286 ընտանիքի տրամադրվել է կենցաղային տեխնիկա:
- ✓ Մշակութային կյանքին ներգրավելու նպատակով՝ «Մենք կարող ենք», «Առաքելություն Հայաստան», «Զոհված ազատամարտիկների ընտանիքների միություն» ՀԿ-ների և «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման» կենտրոնի շահառուներին տարվա ընթացքում տրամադրվել են ներկայացումների տոմսեր:
- ✓ Սփյուռքի երիտասարդների հայրենաճանաչության «Արի տուն» ծրագրի շրջանակներում վարչական շրջանի 27 ընտանիք հյուրընկալել է սփյուռքահայ 38 երիտասարդի:
- ✓ Սոցիալապես անապահով 1300 անձի ամանորյա տոների առիթով տրամադրվել են սննդի փաթեթներ, 2800 երեխայի ամանորյա նվեր-փաթեթներ:

# ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

2017 թ. զգալի և տեսանելի աշխատանք է կատարվել մանկապարտեզների վերանորոգման, գույքով համալրելու ուղղությամբ:

- ✓ 2017թ. ընթացքում վարչական շրջանի հ. 69, հ. 70 մանկապարտեզները հիմնանորոգվել են, հ.հ 63, 64, 71 մանկապարտեզներում կատարվել են մասնակի նորոգումներ:
- ✓ Ն. 64 մանկապարտեզում վերանորոգվել է տանիքը՝ 400 քմ: Կատարվել է հ. 69 մանկապարտեզի բակի 1514 քառակուսի մետր հատվածի ասֆալտապատում: Վերանորոգվել է հ. 63 մանկապարտեզի խոհանոցի առաստաղը: Վարչական շրջանի մանկապարտեզները համալրվել են նոր գույքով՝ մանկական սեղաններ, մանկական աթոռներ, երկհարկանի և եռահարկ մահճակալներ, սառնարան, սալօջախ, մանկական զգեստապահարաններ:
- ✓ 2017թ. վարչական շրջանի մանկապարտեզներում կազմակերպվել և անցկացվել են հիշատակի օրերին, ազգային, եկեղեցական և ծիսական տոներին նվիրված միջոցառումներ:
- ✓ Վարչական շրջանում ապահովվել է **2370** երեխայի անվճար նախադպրոցական ուսուցում:





2017 թ. ակտիվացում է արձանագրվել վարչական շրջանի մշակութային կյանքում:



- ✓ Մ. Մալունցյանի անվան արվեստի դպրոց - 409 աշակերտ
- ✓ Տ. Չովսաջյանի անվան երաժշտական դպրոց-451 աշակերտ
- ✓ Ն. 3 Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն - 650 աշակերտ
- ✓ «Սասունցի Դավթի» կայարանամերձ հրապարակում կազմակերպվել է ամանորյա միջոցառում:
- ✓ Էրեբունի վարչական շրջանում մեծ շուքով նշվել են Բարեկենդանի, Սուրբ Զատիկի, Վարդավառի տոները:
- ✓ Էրեբունի վարչական շրջանում կազմակերպվել են միջոցառումներ՝ նվիրված կանանց միամսյակին:
- ✓ Մայիսին վարչական շրջանում մեծ շուքով անցկացվել են հաղթական եռատոնին նվիրված միջոցառումներ:
- ✓ Նունիսի 1-ին Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա առթիվ Էրեբունի վարչական շրջանի «Մանկական» զբոսայգում կազմակերպվել է միջոցառում:
- ✓ Նունիսի 1-ից օգոստոսի 31-ը անցկացվել են «Երևանյան ամառ», «Ուրախ ամառ» բակային միջոցառումները:
- ✓ ՀՀ Անկախության տոնին նվիրված տոնական մեծ միջոցառում է անցկացվել «Մանկական» զբոսայգում:
- ✓ Վարչական շրջանի չորս գրադարաններում նշվել է գրադարանավարի օրը:
- ✓ Նիմանորոգվել է Լուսիկ Ագուլեցու անվան տուն-թանգարանի պատկերասրահը:
- ✓ «Էրեբունի-Երևան 2799» տոնակատարությունների շրջանակում անցկացվել են տոնական միջոցառումներ:

# ՄՊՈՐՏԻ ՈԼՈՐՏ

2017 թվականին սպորտային հաստատություններն արձանագրել են սաների թվի աճ:

- ✓ չմայակ Խաչատրյանի անվան համալիր մարզադպրոց է հաճախում 380 սան:
- ✓ Էրեբունի վարչական շրջանի շախմատի դպրոց է հաճախում 210 երեխա:
- ✓ Առողջ ապրելակերպի և սպորտի մասսայականացման ու զարգացման ուղղությամբ իրականացվում են բազմաթիվ ծրագրեր:
- ✓ Վարչական շրջանի շախմատի ՄՊՍԴ-ում հոկտեմբերի 16-25-ը անցկացվել են 4-րդ, 3-րդ, 2-րդ կարգի որակավորման մրցաշարեր:
- ✓ Վարչական շրջանի ֆուտբոլի թիմը մասնակցել է «Նայկական ֆուտբոլի վետերանների և պատանի ֆուտբոլիստների համերաշխություն» մրցաշարին:
- ✓ Անցկացվել են ՀՀ Անկախության տոնին նվիրված մարզական խաղեր 22 հանրակրթական դպրոցների միջև:
- ✓ 1-6րդ դասարանցիների միջև անցկացվել է ՀՀ ազգային ժողովի գավաթի մրցույթ:
- ✓ Վարչական շրջանի Հ. 3 ՄՊՍԿ-ում անցկացվել է թեքվանդո մարտաոճի բաց առաջնություն: Առաջնության հաղթողներին և մրցանակակիրներին պարգևատրել է Էրեբունի վարչական շրջանի ղեկավարը:
- ✓ Անցկացվել է «Առողջ սերունդ, պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային առաջնությունը:
- ✓ Էրեբունի վարչական շրջանը վետերանների շախմատի ակումբին նվիրել է շախմատային մարզագույք և շախմատի խաղաքարեր:



# ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՆԱԶԱՊԱՏՈՒՄ

2017 թ. վարչական շրջանում զգալի աշխատանք է կատարվել ոռոգման համակարգի վերանորոգման և կանաչապատման ուղղությամբ:



Էրեբունի վարչական շրջանում ստեղծվել և բարելավվել են կանաչ տարածքներ՝ Գ. Մահարու 6-րդ փող. թիվ 70 մանկապարտեզ, Տ. Մեծի փող. և մի շարք բակային հատվածներում.

- ✔ Տնկվել է 119000 ծաղիկ,
- ✔ Տնկվել է 1210 ծառ ու թուփ:



## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼ. ՑԱՆՑԵՐ», «ՎԵՌԼԻԱ ԶՈՒՐ», «ԵՐԵՎԱՆ ԳԱԶ» ՓԲԸ-ՆԵՐԻ ՀԵՏ

2017 թվականին ծավալուն աշխատանք է կատարվել ջրագծերի, կոյուղագծերի, դիտահորերի և անձրևատար խողովակների վերանորոգման, մալուխային լարերի և վթարային էլեկտրասյունների փոխարինման և այլ ուղղություններով:



- ✓ Նոր ջրամատակարարման համակարգի կառուցում – 25 700 գծմ
- ✓ Աթոյան փող., Ագատամարտիկների փող., Ագատամարտիկների փող. Նրբ., Մուրացանի փող. և Նոր Արեշի 4, 8, 35, 37, 39, 41, 29, 22, 28, 19, 14, 11, 12, 15, 17, 34 փողոցներում:
- ✓ «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից բարելավման ներդրումային ծրագրով իրականացվել է 220 գծմ հոսանքագծերի փոխարինում 4 հասցեներում:

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ

2017 թվականին ծավալուն աշխատանք է կատարվել վարչական շրջանի արտաքին լուսավորության ցանցի արդիականացման և ընդլայնման ուղղությամբ:

- ✓ Կատարվել է 279 հենասյունների փոխարինում:
- ✓ Անցկացվել է 10225 գծմ լուսավորության նոր ցանց՝ 216 լուսակետով:

2017 թ. բազմաթիվ ուղղություններով զարգացել են միջազգային կապերը:

**Համագործակցություն Արցախի հետ**

Երկկողմ կապերի հաստատման և ամրապնդման նպատակով Էրեբունի վարչական շրջանը համագործակցության հուշագրեր է ստորագրել Հաղրուփի շրջանի վարչակազմի և Հաղրուփ քաղաքի հետ: Համագործակցության շրջանակներում Էրեբունի վարչական շրջանը Արցախի Հանրապետության Հաղրուփի շրջանին աջակցություն է տրամադրել:

**Համագործակցություն ՀՀ մարզերի հետ**

Էրեբունի վարչական շրջանը համագործակցության հուշագիր է ստորագրել Սևան քաղաքի հետ: ՀՀ մարզերի հետ համագործակցության ծրագրի շրջանակում Էրեբունի վարչական շրջանը Սևանի մանկապարտեզներին, դպրոցներին, մշակութային կենտրոններին ցուցաբերել է տեխնիկական աջակցություն: Համագործակցության շրջանակում Դավիթ Գրիգորյանը մասնակցել է Հախմատի միաժամանակյա մրցաշարին, որն անցկացրել է գրոսմայստեր Զավեն Անդրիասյանը:



## Համագործակցություն Վրաստանի հետ

Վարչական շրջանի ղեկավարն ընդունել է Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանի գլխավորած պատվիրակությանը: Կողմերի միջև կնքվել է համագործակցության հուշագիր:

## Համագործակցություն Ֆրանսիայի հետ

2017 թվականի նոյեմբերի 14-ին Էրեբունի վարչական շրջանի ղեկավարը ընդունել է Փարիզից ժամանած «Bonheur Retrouve» կազմակերպության անդամներին: Անցկացվել է կլոր-սեղան քննարկում:

## Համագործակցություն Սանկտ Պետերբուրգի հետ

Էրեբունի վարչական շրջանի աշխատակազմը մասնակցել է «Սանկտ Պետերբուրգի օրերը Երևանում» տոնական միջոցառումների շրջանակում փորձի փոխանակման նպատակով կազմակերպված կլոր-սեղան քննարկմանը՝ հետագայում համագործակցությունն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով:





**Մենք  
հաշվետու ենք**  
մեր համաքաղաքացիներին

**ԹԵԺ ԳԻԾ՝**  
+(374 11) 518-388  
erebouni@yerevan.am

